# ԱՐՑԱԽԻ ՄԵԼԻՔՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՄԻ ՔԱՆԻ ՀԱՐՑԵՐԻ ՇՈՒՐՋ

ԱՐՏԱԿ ՄԱՂԱԼՅԱՆ

*1375 թ. Կիլիկիայի հայոց թագավորության անկումից հետո, այնուհանդերձ, հայկական մի շարք լեռնային մանր իշխանությունների հաջողվեց պահպանել իրենց կիսանկախ գոյությունը ողջ միջնադարի ընթացքում: Այդ իշխանություններից առավել հզորը Արցախի մելիքություններն էին, որոնց էլ վիճակված էր մեծ դեր խաղալ ուշ միջնադարի հայոց պատմության մեջ:*

*Գնահատելով թուրքերի դեմ մղված պայքարում հայերի բազմաթիվ ծառայությունները՝ Իրանի Նադիր շահը 1736 թ. ճանաչել է Արցախի մելիքների ինքնիշխանությունը և վերահաստատել նրանց դաշնային ինքնավարությունը՝ Խամսայի մելիքություններ (պարսկերեն՝ «Մահալ-ե խամսե») անունով: Սխալված չենք լինի, եթե ասենք, որ հայ իրականության մեջ Արցախի մելիքությունները մնացել էին այն միակ ուժը, որոնց հենքի վրա հնարավորության դեպքում կարող էր վերստին հառնել հայոց պետականությունը:*

*1752 թ. Վարանդայի տխրահռչակ Մելիք-Շահնազար Բ-ի թողտվությամբ Արցախում հաստատվեց քոչվոր ջևանշիր ցեղի սարըջալլու ճյուղի ցեղապետ Փանահ խանը: Այդ առիթը ներկայացավ այն ժամանակ, երբ Մելիք-Շահնազարն իր հետ թշնամացած Արցախի մյուս չորս մելիքությունների տիրակալներին դիմադրելու համար դաշնակցեց Փանահի հետ՝ նրան տրամադրելով իր մելիքության տարածքում գտնվող Շուշի բերդը: Այս կապակցությամբ ռուս նշանավոր զորավար Ա. Սուվորովը իրավացիորեն նկատել է. «Իր հայրենիքի այս դավաճանը կանչել է Փանահ խանին…, տվել նրա ձեռքը իր ամուր բերդը՝ Շուշի դալան և սղնախով հանդերձ հպատակվել նրան»[1]:*

*1775 թ. հուլիսի 6-ին Գանձասարի կաթողիկոս Հովհաննես Հասան-Ջալալյանի կողմից Ամենայն Հայոց կաթողիկոս Սիմեոն Երևանցուն ուղղած մի նամակում նրա մասին կարդում ենք. «Եւ եթէ ի կողմանցս յայսցանէ հարցանիցես. հնգեքին մէլիքքն են ընդ մեզ բաց ի մէլիք Շահնազարէն, որ դեռևս խարդախութեամբ ընդ մեզ գնայ, և ո՛չ գնախանձն իւր հատանէ ի մէնջ»[2]: Կարծում ենք՝ ում ում, սակայն Գանձասարի կաթողիկոսին և միաբաններին անհնար է մեղադրել Արցախի՝ իրենց ապրած ժամանակի պատմության չիմացության մեջ:*

*Մեկ այլ ժամանակակից՝ ռուսահայոց թեմի առաջնորդ Հովսեփ արք. Արղությանը, 1780 թ. հերթականությամբ ներկայացնելով Խամսայի մելիքներին, Մելիք-Շահնազարի մասին գրում է. «Զօրացուցիչն է տաճկաց և միաբան ընդ*

---

[1] М. Нерсисян. А. В. Суворов и русско-армянские отношения в 1770–1780-х годах. Ереван, 1981, с. 91, 136.

[2]

*խանին»[3]: Իսկ ահա Հյուսիսային Կովկասի զորքերի հրամանատար, գեներալ Պավել Պոտյոմկինին Հ. Արղությանի՝ 1783 թ. հունվարի 28-ին գրած նամակում կարդում ենք. «Մէլիք Ադամի, մէլիք Յովսեփի և մէլիք Եսայու խորհուրդն մի էր, բայց ի մէջ նոցա որպէս թէ խտրոցէր մէլիք Շահնազարն, որ է այր խորամանկ, թերահաւատ և ամենայն գործս բարեաց անպիտան, նենգաւոր և դաւաճանօղ եղբարց: Ի Ղարաբաղ գայր էլ ինչ, որպէս յերկրիս նօղայիքն խորանաշրջիկ, որք կոչիւր Ջվանշիր, որոյ գլխաւորին անունն էր Փանայ խան: Խորամանկն ի չարիս մէլիք Շահնազարն զնա կոչեալ ի յօգնութիւն իւր, կամաւ իւրով հնազանդեցաւ նմա և զբերթն իւր ետ նմա… Բաց ի մէլիք Շահնազարէն և ի տանէն իւրմէ, այլ մէլիքքն և բոլոր բնակիչքն հնգեքին գաւառացս և հոգևորքն սոցա, եթէ զտին առիթ ինչ օգնութեան, ապստամբելոց են ի խանէն…, զի ի ձեռաց բարբարոսացն ոչ ունին զյանդորր և զապահով կեանս, յաղագս կեղեքելոյն նոցա և կամ մշտապէս պատերազմացն»[4]: Այս վկայությունները գրվել են Ռաֆֆու «Խամսայի մելիքությունները» հանրահայտ աշխատության ստեղծումից ուղիղ մեկ դար առաջ՝1770–80-ական թվականներին, երբ դեռևս ծնված չէին նաև Ղարաբաղի խանության պատմությունը շարադրող գրագիր-միրզաները, և հստակ ցույց են տալիս իրերի իսկական դրությունը Արցախում:*

*Այդ մասին ուշագրավ տեղեկություն է հաղորդում նաև Միրզա Ադիգյոզալ-բեկը. «Մելիք-Շահնազարն, տեսեալ զտկարութիւն իւր, ի հոգս անկաւ զհետևանաց գործոյն և եկն առ գերաստիջան խանն, որում և ծառայէր հաւատարմութեամբ, որպէս և զտեղին, ուր հիմնեցաւ Շուշի բերդաքաղաքն, եցոյց յիշեալ խանին»[5]: Բերված տեղեկությունները չափազանց հստակ ցույց են տալիս տխրահռչակ Մելիք-Շահնազարի իրական դերակատարությունը նորաթուխ խանի՝ Արցախում հաստատվելու գործում: Մորթապաշտ դավաճանից հետին թվով □դիվանագետի□ ստեղծումը ոչ այլ ինչ է, եթե ոչ պարզունակ պատմաշինարարություն, որն այս անգամ արդեն իրականացվում է առանձին հայ հեղինակների կողմից[6]: Ընդ որում, առանց որևէ փաստի առաջ է քաշվում մի անհեթեթ վարկած, ըստ որի, ի՛բր հատուկ խորհրդակցությունից հետո - Փանահ խանին Արցախ են «հրավիրել» տեղի մելիքները: Նրանք մոռացության են տալիս այն պարզ իրողությունը, որ Փանահի և նրա որդի Իբրահիմի իշխանությունը, նրանց՝ Արցախում հաստատվելու առաջին իսկ օրից, իր*

---

[3] Армяно-русские отношения в XVIII веке, т. IV. Ереван, 1990, с. 153.

[4] Там же, с. 212–213.

[5] *Միրզա Ադիգեօզալ-բէկ. Ղարաբաղ-նամէ.– ՄՄ, ձեռ. 4463, էջ 6ա, Ա. Մաղալյան. Միրզա Ադիգյոզալ-բեկի «Ղարաբաղ-նամե» աշխատության տեղեկություններն Արցախի մելիքությունների մասին.– «Հանդես ամսօրյա», 2011, թիվ 1–12, էջ 400:*

[6] *Նկատի ունենք Մելիք-Շահնազարի շառավիղ, լրագրող Ա. Մելիք-Շահնազարովի, քաղաքագետ Դ. Բաբայանի և պատմաբան Պ. Չոբանյանի հրապարակումները (տե՛ս* А. Мелик-Шахназаров. Варанда–сердце Арцаха.– «Анив». Минск–М., 2006, ¹ 6, с. 27–37; Д. Бабаян. Политическая история Карабахского ханства в контексте арцахской дипломатии XVIII века. Ереван, 2007; П. Чобанян. Проблема легитимности Карабахских ханов в контексте политической истории Шуши. – «Рабочие тетради». Приложение к военно-научному журналу «Айкакан банак», 2013, ¹ 1–2, с. 10–29*):*

*սուր ծայրով ուղղված էր տեղի հայոց մելիքությունների և դրանց հոգևոր կենտրոն Գանձասարի կաթողիկոսության դեմ: Բարեբախտաբար, Արցախում այդ ժամանակաշրջանում իշխած բոլոր մելիքների անուններն էլ քաջ հայտնի են, և Արցախի պատմությանը քիչ թե շատ ծանոթ յուրաքանչյուր ոք գիտի, որ այդ մելիքներից երկուսը՝ Ջրաբերդի Ալլահդուլի սուլթանը[7] և Խաչենի Մելիք-Ալլահվերդին, սպանվել են հենց Փանահի կողմից՝ վերջինիս Արցախում հաստատվելուց շատ չանցած: Ընդ որում, Մելիք-Ալլահվերդու մահով անդառնալի հարված էր հասցվում Խաչենի նշանավոր Հասան-Ջալալյանների տոհմի աշխարհիկ իշխանությանը: Փանահի որդի Իբրահիմը 1781 թ. սպանեց Դիզակի Մելիք-Եսայուն, իսկ 1786-ին՝ Գանձասարի կաթողիկոս Հովհաննես Հասան-Ջալալյանին: Իբրահիմ խանի կողմից սպանվեցին նաև Դիզակի Մելիք-Բախտամը, Մելիք-Աբասը և Մելիք-Եսայու որդի Բաղդադ-բեկը, իսկ Մելիք-Եգանյանների տոհմի մի ճյուղը բռնությամբ մահմեդականացվեց: Խաների կողմից մելիքական տների ներկայացուցիչներին բռնությամբ մահմեդականացնելու փորձերի կապակցությամբ նշանավոր պատմաբան Աշոտ Հովհաննիսյանը դիպուկ նկատել է. «Հիմնականում խաների կրոնական անհանդուրժամտությունը ուղղված էր մելիքական տների դեմ, սրվելով քաղաքական և հաճախ նաև դրա հետ կապված նրանց մուլքադարական իրավունքների դեմ»[8]:*

*Մեզ են հասել Իբրահիմ խանի սպանած մի քանի մելիքների և մելիքազունների տապանաքարերի արձանագրությունները: Այսպես, հայտնի է, որ Իբրահիմ խանը ուխտադրժորեն ձերբակալել և 1787 թ. թունավորելով սպանել է Դիզակի Մելիք-Բախտամին[9]: Այդ իրողությունը հաստատվում է նաև մելիքի տապանագրով.*

*«Յայսմ տապանի հանգչի մարմին՝*
*Քաջ եւ արի Մելիք Բախտամին.*
*Սա էր որդի Մելիք Արամին.*
*Մահ եւ վախճան պատմեն սորին՝*
*Մահադեղով Իբրահիմ խանին.*
*Եւ որք հանդիպիք ի տապան սորին,*
*Միով բանիւ ողորմի ասէք. ամէն»[10]:*

*Իբրահիմ խանի կողմից 1791 թ. դաժանաբար սպանվեցին նաև Խաչենի Հասան-Ջալալյան տոհմի երկու մելիքազուններ՝ Ջալալ-բեկը և Դանիել-բեկը:*

---

[7] *ՄՄ, ձեռ. 7816, էջ 20բ, Մանր ժամանակագրություններ XIII–XVIII դդ., հ. I, կազմեց՝ Վ. Հակոբյան, Երևան, 1951, էջ 396: Այստեղ կարդում ենք. «ՌՃՂԸ (1749) թվին Փանահն էսպան մելիք Ալլադուլին՝ սեպտեմպեր ամսումն»:*

[8] *Ա. Հ ո վ հ ա ն ն ի ս յ ա ն. Դրվագներ հայ ազատագրական մտքի պատմության, գիրք II, Երևան, 1959, էջ 256:*

[9] А. И о а н н и с я н. Россия и армянское освободительное движение в 80-х годах XVIII столетия. Ереван, 1990, с. 186.

[10] *Ա. Կ ո ս տ ա ն յ ա ն ց. Դիզակի մելիքութիւնը.– □Նիւթեր հայ մելիքութեան մասին□, պր. Ա, Վաղարշապատ, 1913, էջ 62, Դիվան հայ վիմագրության, պր. V, Արցախ, կազմեց Ս. Բարխուդարյան, Երևան, 1982, էջ 178:*

*Վերջինիս որդին՝ Բաղդասար մետրոպոլիտ Հասան-Ջալալյանը, 1851 թ. տապանաքար է դնում հոր շիրիմի վրա, որի վրա փորագրված էր.*

*«Յարձանիս շիրմի ամփոփեալ դնի*
*Մարմին իշխանին Խաչեն գաւառի,*
*Վեհ իշխանազնեայ Դանիէլ Բէկի*
*Որդւոյ Մելիք Բէկ իշխանապետի,*
*Ի տանէ հայկազն մեծ Ջալալ Դօլի*
*Տեառն Արցախայ Հայոց աշխարհի,*
*Որ Ղարապաղայ կամ Շուշւոյ նահանգ*
*Նա սովորաբար արդ վերաձայնի,*
*Առ սուրբ հաւատոյ սա լուսահոգի*
*Նահատակի աստ յամրոցիս Շուշի՝*
*Դառն տանջանօք Իբրահիմ խանի,*
*Որ թշնամի էր Խաչին Քրիստոսի.*
*Ի ՌՄԽ (1791)…»*[11]*:*

*Ի դեպ, նահատակված Դանիել-բեկը հետագայում դասվել է հայոց նոր վկաների շարքը*[12]*:*

*Յավոք, մեզ չեն հասել Փանահ և Իբրահիմ խաների սպանած մյուս մելիքների և մելիքազունների տապանաքարերի արձանագրությունները, այլապես պատկերն առավել լիարժեք կլիներ:*

*Հավաստի այլ աղբյուրներից հայտնի է, որ Իբրահիմ խանի կարգադրությամբ դավադրաբար «ի 1230 (1781) թուին Դողու Մալիք Սային (Մելիք-Եսայուն – Ա. Մ.) սպանեցին»*[13]*: Այդ կապակցությամբ ռուս զորավար Ա. Սուվորովը 1781-ին իշխան Գ. Պոտյոմկինին ուղղած զեկույցում գրում է. «Շուշիի Իբրահիմ խանը չարություն գործադրելով՝ որոշ գումար է պահանջել Դիզակի Մելիք-Եսայուց և չարչարելով էլ սպանել նրան»*[14]*: Իսկ Հ. Արղությանը գեներալ Պ. Պոտյոմկինին 1783 թ. հունվարի 28-ին գրած մեզ նախածանոթ նամակում հստակեցնում է. «Մելիք Եսային սպանեալ է սոյն խանս* խորհրդով մելիք Շահնազարին *(ընդգծումը մերն է – Ա. Մ.)»*[15]*:*

*Վերջինիս խորհրդով է տեղի ունեցել նաև Գյուլիստանի Մելիք-Բեգլարյանների տոհմի ունեցվածքի հափշտակումը: Այդ մասին 1783 թ. մարտի 15-ին Հ. Արղությանին հղած նամակում վկայություն է թողել անձամբ ունեզրկված Մելիք-Աբով Մելիք-Բեգլարյանը. «Յետ վաղջան հօր և եղբօր իմում, թէ որքան յափշտակեցին ի տան մերոց ոսկեղէն և արծաթեղէն, ի շալս թիրմայի և չար-*

---

[11] *Մ. Եպս. Բարխուտարյանց. Աղվանից երկիր և դրացիք: Արցախ, Երևան, 1999, էջ 238:*

[12] *Հայոց նոր վկաները (Ժողովրդական հրատարակություն), հ. Բ, կազմեցին Հ. Մանանդյան և Հ. Աճառյան, Վաղարշապատ, 1902, էջ 252:*

[13] *ՄՄ, ձեռ. 3881, էջ 86բ:*

[14] Армяно-русские отношения в XVIII веке, т. IV, с. 172; Нагорный Карабах в международном праве и мировой политике. Документы и комментарии, сост. Ю. Барсегов, т. I. М., 2008, с. 79–80.

[15] Армяно-русские отношения в XVIII веке, т. IV, с. 212.

*կազիս ոսկէ թէլ և դալամքարեղէն և այլ նմանք սոցին, ի ձի և ջորիք, որ յափշտակօղն յերկրիս բռնաւոր Իբրահիմ խանէ Փանահեան խանի և արարօղ սմին Շահնազար մէլիքն Յուսէինեան մէլիքի Վարանդեցոյ, որ սիահի արարաք (ցուցակագրեցինք – Ա. Մ.)՝ յղեցաք»[16]: Մեզ է հասել նաև Մելիք-Աբովի տնից հափշտակված ունեցվածքի հիշյալ ցուցակը: Սակայն այս դեպքում մեզ համար էականը ոչ թե Մելիք-Աբովից թալանված պատկառելի հարստության թվարկումն է, այլ այն, որ այդ փաստաթղթում հստակ արձանագրված է, որ Մելիք-Բեգլարյանների տան ունեզրկումը ևս տեղի է ունեցել «Մելիք-Շահնազարի խորհրդով, 1782 թ. նոյեմբերի 28-ին»[17]: Ո՞վ գիտե, թե նմանատիպ որքան մահաբեր և կործանարար խորհուրդներ է նա շշնջացել Փանահ և Իբրահիմ խաների ականջներին, որոնք ոչ ոք չի լսել կամ, պարզապես, չի հասցրել արձանագրել… Բերված բազմաթիվ փաստերից դժվար չէ համոզվել, որ Մելիք-Շահնազարն այդ խաների ձեռքին դարձել էր հլու-հնազանդ և կույր գործիք՝ Արցախի մնացյալ մելիքությունների դեմ պայքարում:*

*Մելիք-Շահնազարը, միանալով Փանահ խանին, մասնակցել է իր թշնամի Խաչենի Մելիք-Ալլահվերդի Հասան-Ջալալյանի ամրոցի պաշարմանը[18]: Այդ արշավանքի մասին Ղարաբաղի խանության վեզիր Միրզա Ջամալ Ջևանշիրը գրում է. «Քանի որ Շահբուլաղի մոտ գտնվող Խաչենի մահալի բնակիչները մշտապես գնում էին Փանահ խանի դեմ ատելության և թշնամության ճանապարհով, ուստի նա իր առջև խնդիր դրեց սկզբում ճնշել նրանց ըմբոստությունը և իր հեծյալ ու հետևակ զորքով գնաց նրանց դեմ կռվի: Խաչենի մահալի բնակիչները, շուրջ երկու հազար հրաձիգներով, իրենց ընտանիքներով ամրանալով դժվարամատչելի վայրում՝ Բալլուղայայում, սկսեցին դիմադրել: Փանահ խանը գրոհեց նրանց ամրությունը: Երեք օր շարունակ բոցավառվեց ճակատամարտի և ընդհարումների հրդեհը: Երրորդ օրը Փանահ խանը գրավեց նրանց ամրությունը…»[19]: Այս տեղեկությունները հաստատում է նաև հայ պատմագիր Միրզա Յուսուֆ Ներսեսովը (Հովսեփ Ներսիսյանց), ով այդ մասին գրում է. «Խաչենի մահալում Ուլուբաբի թոռը (Մելիք-Ալլահվերդին – Ա. Մ.) ըմբոստանալով՝ տարբեր գյուղերից մարդ է հավաքում ու ամրանալով Բալլուղայա բերդում՝ սկսում կռվել Փանահ խանի դեմ: Փանահ խանը մեծ բազմությամբ շարժվում է դեպի նրա ամրությունը: Ուժգին կռվից հետո նրանց ամրոցը գրավում է, շատերին կոտորում և սպանվածների գլուխներից աշտարակ (պարսկերեն բնագրում՝ մինարեթ – Ա. Մ.) է կառուցում»[20]: Սպանված հակառակորդների գլուխներից մինարեթների կառուցումը լայնորեն տարածված է եղել Արևելքում՝ որպես թշնամական բնակչության շրջանում ահ ու սարսափ տարածելու ազդու միջոց: Ըստ երևույթին՝ Նադիր շահի արքունի-*

---

[16] Там же, с. 236–237.

[17] Там же, с. 544–545.

[18] *Հայ ժողովրդի պատմություն, հ. IV, Երևան, 1972, էջ 194:*

[19] Мирза Джамал Джеваншир Карабагский. История Карабага. Баку, 1959, с. 69; Two Chronicles on the History of Karabagh. Introduction and Annotated Translation by George Bournoutian. Costa Mesa, California, 2004, pp. 58–59.

[20] *Միրզա Յուսուֆ Ներսեսով. Ճշմարտացի պատմություն, Երևան, 2000, էջ 50–51, պարսկ. բնագիր, էջ 83ա:*

*քում ստացած դասերն է, որ Փանահ խանը կիրառել է Խաչենի հայ բնակչության նկատմամբ: Ի գիտություն հնօրյա դավաճանի նորօրյա «փաստաբաններ-ի» ՝ իրականում ահա՛ թե ում դեմ էր ուղղված և ինչպես էր գործում Մելիք-Շահնազարի «հրավերով» Արցախ ներմուծված «ռազմական ռեսուրսը»[21]: Մելիք-Ալլահվերդու սպանությունից հետո Փանահ խանը Խաչենի մելիք է նշանակում Խնձրիստան գյուղի տանուտեր Միրզախան Մելիք-Միրզախանյանին:*

*Այնուհետև Փանահ խանն իր հարձակման սլաքն ուղղում է Ջրաբերդի և Գյուլիստանի մելիքությունների վրա: Այդ մարտերի մասին ուշագրավ տեղեկություններ է հաղորդում մեկ այլ մահմեդական պատմագիր ՝ Միրզա Ադիգյոզալ-բեկը: Ջրաբերդի Մելիք-Ադամը և Գյուլիստանի Մելիք-Հովսեփը «ամրանում են Ջերմուկի բերդում (Ջրաբերդում –* Ա. Մ.*)… Նրանց ամրոցի անմատչելիության շնորհիվ Փանահ խանը չէր կարողանում հասնել իր նպատակին,– գրում է նա,– այլ լեռնափեշերին փռված ցանքերն էր իր զորքի ձիերի սմբակների տակ տալիս: Ամրոցում գտնվողները հայտնվեցին ծանր կացության մեջ: Սակայն երկու մելիքները, չնայած անասելի զրկանքներին, չորս տարի շարունակ ցույց տվեցին անսասանության և համառության օրինակներ… Նրանք գլխավորում էին [այժմ] հանգուցյալ Փանահ խանի դեմ մարտի եկած շրջապատի խաների զինված ջոկատները և ոչ մի քայլ չէին նահանջում նրա դեմ սկսած պայքարից»[22]:*

*Հետագայում այդ մելիքները նահանջում և ամրանում են Գյուլիստանի բերդում: Այնտեղ Փանահի դեմ նրանց մղած հաղթական կռիվներից մեկի վերաբերյալ հետևյալ ուշագրավ տեղեկություններն է հաղորդում կապիտան Օթար Թումանովը ՝1754 թ. դեկտեմբերի 1-ին Ռուսաստանի արտաքին գործերի կոլեգիային հղած զեկուցագրում. «Հայերը գտնվում էին Սղնախում ՝ Գյուլիստանի բերդում: Նրանց գլխավորները մելիք Յուսուֆ (Հովսեփ –* Ա. Մ.*) և մելիք Աթամ են կոչվում: Սրանք մինչ 1500 [զինված] մարդ ունին: Այս հայերի վրա հարձակվել է Փանա-խանը, հայերը հաղթել են, Փանա-խանի մարդկանցից 300-ի չափ սպանել են: Այս պատերազմը եղավ 1754 թ. օգոստոսի 26-ին»[23]: Սույն տեղեկության հավաստիության, ինչպես նաև այդ արշավանքներին Մելիք-Շահնազարի մասնակցության մասին է վկայում Հ. Արղությանը. «Թէպէտ փոքր էին սոքա (երկու մելիքները –* Ա. Մ.*) թուով, բայց բազում անգամ զյաղթութիւնս արարին և զօրս Փանայ խանին և մելիք Շահնազարին հալածականս արարին»[24]:*

*Ինչպես տեղեկանում ենք Օ. Թումանովի 1755 թ. մարտի 21-ի զեկուցագրից, դիմադրությունը շարունակվել է նաև հաջորդ տարի. «Սղնախի հայերը մեկուսացած են իրենց տեղում, ներկայումս Փանա-խանին և թուրքերին չեն*

---

[21] *Հմմտ.* П. Ч о б а н я н. Указ. раб., с. 28.

[22] М и р з а А д и г е з а л ь - б е к. Карабаг-наме. Баку, 1950, с. 59–60.

[23] *Լ. Մ ե լ ի ք ս ե թ - բ ե կ. Վրաց աղբյուրները Հայաստանի և հայերի մասին, հ. Գ, Երևան, 1955, էջ 107,* Документы по взаимоотношениям Грузии с Северным Кавказом в XVIII в. Документы подобрал, подготовил к печати и предпослал им исследование В. Гамрекели. Тбилиси, 1968, с. 140.

[24] Армяно-русские отношения в XVIII веке, т. IV, с. 212.

*ծառայում»[25]: Իսկ նույն թվականի նոյեմբերի 20-ի զեկուցագրով Օ. Թումանովը Ղզլարի պարետ Իվան ֆոն Ֆրաուենդորֆին հաղորդում է. «Սղնախի հայոց մելիք Յուսուֆը այստեղ (Վրաստան – Ա. Մ.) թագավորների մոտ եկավ իր ընտանիքով՝ 60-ի չափ մարդկանց ուղեկցությամբ: Սղնախը դատարկվել է: Իրոք հացի թանկություն է եղել այնտեղ… Գյուղացի-ռայաթը Փանա-խանին է մնացել: Մելիք Ադամն իր ընտանիքը Գյանջա է ուղարկել, ինքը դեռևս իր բերդումն է գտնվում, սակայն ներկայումս ոչ մի տեղից օգնություն չի երևում»[26]: Այսպիսով, չդիմանալով Փանահի հարաճուն ճնշմանը, մելիքներն իրենց զորքի և ժողովրդի մի մասի հետ հեռանում են իրենց տիրույթներից և ապաստանում Գանձակի Շահվերդի խանի մոտ, սպասելով հարմար առիթի՝ Փանահ խանի դեմ իրենց արյունոտ գոյամարտը շարունակելու համար:*

*Հենց այդ ընթացքում էլ Խամսայի երկրում համաճարակ է սկսվում, ինչի մասին վկայում է Մելիք-Հովսեփի ատենադպիր Ոսկանն իր հիշատակարանում. «Ի թվականութեանս մերում ՌՄՀՆ (1759) էր, զոր մահ անկաւ ի յերկիրն Խամսայ, ի գիւղն Հատրութ, որ է Տիզաղ…»[27]: Իսկ այդ համաճարակին նախորդել էին Դիզակ գավառի վրա Փանահ խանի արշավանքները: Այդ արշավանքների և դրանց Մելիք-Շահնազարի մասնակցության մասին մանրամասն տեղեկություններ է հաղորդում Միրզա Ջամալ Ջևանշիրը. «Փանահ խանը, հավաքելով իր ողջ զորքը, Մելիք-Շահնազար-բեկի հետ հարձակվեց Տող գյուղի վրա, որտեղ Մելիք-Եսայի-բեկը բնակեցրել էր իր հպատակների մեծ մասին, և որտեղ գտնվում էր նա՝ շրջապատված 3000-անոց թիկնազորով»[28]: Սույն տեղեկության իսկությունը հաստատում է նաև Հ. Արղությանը, ով մասնավորապես գրում է, թե Մելիք-Շահնազարը «զտունն Եագանի ետ աւար առնել»[29]: Ակնհայտ է, որ Դիզակ գավառում սկսված սովի և համաճարակի պատճառը ոչ թե երկնառաք «ցասումն» էր, այլ Փանահ խանի՝ միանգամայն երկրային արշավանքները, որոնք ուղեկցվում էին ցանքատարածությունների հրդեհումներով, ավերով ու ավարով:*

*Բերված բազմաթիվ վկայությունները փաստում են, որ Արցախում Փանահ խանի արշավանքների հետագիծն ընդգրկում էր Դիզակ, Խաչեն, Ջրաբերդ և Գյուլիստան գավառները, այսինքն՝ գրեթե ողջ Արցախը: Իսկ Մելիք-Շահնազարը, իր հերթին, անմիջական մասնակցություն է ունեցել Արցախի մնացյալ մելիքությունների վրա իրականացված Փանահ խանի բոլոր արշավանքներին ու ասպատակություններին, որոնք անխուսափելիորեն ուղեկցվել են բազմաթիվ հայերի սպանություններով և ավերածություններով: Ուստի, ամենևին էլ պատահական չեն ժամանակակիցների կողմից Մելիք-Շահնազարին տրված «հայրենիքի դավաճան», «զօրացուցիչ տաճկաց», «դաւաճանօղ եղբարց», «ա-*

---

[25] *Լ. Մ ե լ ի ք ս ե թ - բ ե կ. նշվ. աշխ., էջ 108:*

[26] *Նույն տեղում, էջ 109,* Документы по взаимоотношениям Грузии с Северным Кавказом в XVIII в., с. 296.

[27] *Հ. Ս ա հ ա կ վ ր դ. Ճ ե մ Ճ ե մ յ ա ն. Մայր ցուցակ հայերեն ձեռագրաց մատենադարանին Մխիթարյանց ի Վենետիկ, հ. Է, Վենետիկ – Ս. Ղազար, 1996, սյունակ 321:*

[28] М и р з а Д ж а м а л Д ж е в а н ш и р К а р а б а г с к и й. Указ. раб., пер. А. Берже, с. 123.

[29] Армяно-русские отношения в XVIII веке, т. IV, с. 212.

*մենայն գործս բարեաց անպիտան», «խորամանկն ի չարիս», «դահիճ Մելիք-Շահնազար» և նմանատիպ այլ գնահատականներն ու բնութագրումները, ինչպես նաև առ այսօր տրվող անեծքները: Ակնհայտ է, որ առանց հիմնավոր պատճառների ժողովրդի պատմական հիշողության մեջ Մելիք-Շահնազարը երբեք չէր հիշվի նման արտահայտություններով և գիտական հրատարակություններում վկայակոչելու համար անհարիր անեծքներով:*

*Փաստերը ցույց են տալիս, որ Մելիք-Շահնազարի «դիվանագիտական» ծրագրերը չէին անցնում սեփական կաշին հայ մելիքների վրիժառությունից փրկելու ցանկությունից անդին, որի համար չի խորշել անգամ դավաճանությունից: Իսկ անթաքույց դավաճանությունը որպես քողարկված «դիվանագիտություն» ներկայացնելը սպառնում է նորանոր «դիվանագիտական» դավաճանություններով: Եվ, վերջապես, դավաճանի արդարացումը նպատակ դարձրած՝ Մելիք-Շահնազարի նորօրյա «փաստաբանները» թող պատասխանեն այն հարցին, թե բազում վնասներից բացի ի՞նչ են շահել Խամսայի մելիքություններն ու արցախահայությունը նրա «դիվանագիտությունից»: Այդ ի՞նչ «անվանական» իշխանություն ունեցող խաներ էին Փանահն ու Իբրահիմը, որ յուրաքանչյուր պատեհ առիթի դեպքում սպանում էին Արցախի մելիքներին ու մելիքազուններին, թունավորում Գանձասարի կաթողիկոսին, կողոպտում վանքը և բնավեր դարձնում կաթողիկոսությունը, բռնի իսլամացնում ուրիշների, խլում այս կամ այն մելիքի ունեցվածքը: Այդ ի՞նչ «ամանաթներ» էին նրանք[30], որ իրենք էին պատանդառում Արցախի մելիքների մայրերին, կանանց ու որդիներին: Իբրահիմ խանի հարեմում էր գտնվում անգամ Մելիք-Շահնազարի դուստր Հուրիզադ խանումը: Մի՞թե հնարավոր է դստերն ուղարկել սեփական «ամանաթի» հարեմ… «իր գործերը բարելավելու և դիրքերն ամրապնդելու համար»[31]:*

*Ռուսական պաշտոնական տվյալների համաձայն՝ Իբրահիմ խանի «ժամանակավոր կանանց» (հարճերի) թվում հիշվում են նաև Դիզակի մելիքի դուստր Խաթայի խանումը, հայուհիներ Ռուղամը և Սոնա խանումը[32]: Վերջինս, դատելով նրա անվանը կցված □խանում□ բառից, ևս պետք է պատկաներ տեղի հայ երևելի ընտանիքներից մեկին: Իբրահիմ խանի՝ հայ կանանց բռնի սեփական հարեմը տանելու մասին տեղեկություն է հաղորդում նաև Գտչավանքի վանահայր Առաքել Կոստանյանցը: Իբրահիմ խանը «զասստիկ չարութիւնս հասոյց ազգիս Հայոց,– գրում է նա,– ընտրեալ զգեղեցկագոյն աղջկունս և մանկունս և բռնութեամբ քարշեալ տանէր՝ նախ ուրացուցանէր՝ և ապա զանպատմելի խայտառակութիւն դնէր ի վերայ նոցա»[33]:*

*Սանձարձակ խանը որևէ խտրականություն չէր դնում անգամ հայ ավանդական մելիքական տների և իր իսկ դրածո մելիքների ընտանիքների կանանց միջև: Ասվածի խոսուն վկայությունն է Ջրաբերդ գավառում խանի դրածո, Գյուլյաթաղի տեր Մելիք-Ռուստամ Մելիք-Ալլահվերդյանի կնոջ օրինակը.*

---

[30] *Հմմտ.* П. Чобанян. Указ. раб., с. 17.

[31] *Միրզա Յուսուֆ Ներսէսով. նշվ. աշխ., էջ 42:*

[32] Акты, собранные Кавказской археографической комиссией, т. II. Тифлис, 1868, д. 1415, с. 695.

[33] *Ա. Կոստանյանց. նշվ. աշխ., էջ 65:*

*«Պահանջեց նա (Իբրահիմ խանը – Ա. Մ.) Մելիք-Ռուստամից պատանդի անունով նրա կնոջը՝ Վարդ-խաթունին: Մելիք-Ռուստամը անճարացած տվեց, թեև նրան լավ հայտնի էր, որ խանը ավելի իր համար սիրուհի է տանում, քան թե պատանդ»[34]: Բերված փաստերը ցույց են տալիս, թե ինչպես են խանական իշխանության շոշափուկները տարածվել ու ջլատել մինչև իսկ մելիքական ընտանիքները: Անհնար է պատկերացնել անգամ այն ցավը, որը զգացել է յուրաքանչյուր մելիք միայն այն գիտակցումից, որ իր ընտանիքի անդամը հեծեծում է խանական հարեմում:*

*Հիշատակենք մեկ այլ չափազանց ակնառու օրինակ ևս. 1780-ական թվականների վերջերին Իբրահիմ խանը ցանկացել է Բայլականի մոտ թաղված Աղվանից Շուփհաղիշո հայրապետի գերեզմանի վրա մզկիթ կառուցել, ու թեև Սարգիս եպս. Հասան-Ջալալյանը «ջանացեալ է խափանել զայն, բայց խանն այսու առթիւ ի կատար հասուցեալ է, ասելով՝ չէ՛ փոյթ թէ կաթուղիկոս է հայոց, զի գործն ի՛մ է Աստուածահաճոյ»[35]: Իսկ XVIII դարի հայ մարդու համար սրանից ավելի մեծ վիրավորանք դժվար է պատկերացնել:*

*Ի վերջո, եթե Արցախի հայերը և նրանց մելիքները քիչ թե շատ մարդավայել կյանք ունենային խանական կարգերի օրոք, ինչո՞ւ պետք է սեփական կյանքը վտանգելու գնով խնդրագրեր ու պատվիրակություն ուղարկեին մինչև Պետերբուրգ՝ խանական լծից իրենց ազատելու և Ռուսաստանի հովանու ներքո հայկական պետականության վերականգնման խնդրանքով:*

*Փանահ խանի հայտնվելուց հետո Խամսայի մելիքները ստիպված էին նոր մարտահրավերների դիմակայել Արցախում: Հենց նրա ժամանակներից սկսվեց այլացեղ և այլակրոն էթնիկ տարրի ներթափանցումն Արցախ: «Ղարաբաղի նորահաստատ խանության համար կարևոր քաղաքական հարց էր մահմեդական ազգաբնակություն կազմելը երկրի այն կողմերում, ուր չկար այնպիսի տարր, որը պիտի խանական իշխանության նեցուկը դառնար: Փանահ խանը, դավաճանությամբ (խորամանկությամբ – Ա. Մ.) սողոսկելով զուտ հայաբնակ Խամսայի երկրի սիրտը, շուտ զգաց, որ Շուշու ժայռերը դեռ բավարար հիմք չեն տիրապետություն հաստատելու համար,– իրավացիորեն գրում է Լեոն,– և նա շտապեց թուրք թափառական ցեղեր գրավել դրսից՝ հարևան խանություններից, խոստանալով նրանց զանազան արտոնություններ: Այսպիսով, Վրաստանից և այլ տեղերից Ղարաբաղ փոխադրվեցին փյուսյան, կարաչարլի, ջինլի, դեմիրչի-հասանլու, ղրզբլ-հաջիլի, սաֆի-քյուրդ, բոյ ահմեդլի, սահաթլի, քենգերլու և այլ շատ թափառական ցեղեր: Հոր օրինակին հետևելով, Իբրահիմ խանն էլ ամեն ջանք գործ էր դնում՝ դրսից բերելու նոր մահմեդական տարրեր»[36]: Հաջիսամլու, ալիանլու, սուլթանլու և մինջուվանլու քրդական ցեղերը հիմնականում բնակեցվեցին Քաշաթաղի և Քարվաճառի գավառներում[37]: Իբրահիմ խանը «հայոց հողերի վրա բնակեցրեց և թուրք գաղթականներ, որպես էին քոլանիները,– գրում է Ռաֆֆին,– մի վայրենի և ավազակ*

---

[34] *Ռ ա ֆ ֆ ի. Երկերի ժողովածու, հ. 9, Երևան, 1987, էջ 504:*

[35] *Ս. Ջ ա լ ա լ ե ա ն ց. Կաթողիկոսք Աղուանից.– ՄՄ, ձեռ. 8066, էջ 62բ:*

[36] *Լ. ե ո. Երկերի ժողովածու, հ. 3, գիրք 2, Երևան, 1973, էջ 303:*

[37] *Լ. Հ ո վ հ ա ն ն ի ս յ ա ն. Էթնիկական գործընթացները Քաշաթաղի և Քարվաճառի գավառներում 18-րդ դարում և 19-րդ դարի առաջին կեսին.– □Եզերք□, 2006, - 1, էջ 13:*

*ցեղ, որ թափառում էր Ջուանշիրի անապատներում»*[38]*: Վերոնշյալ ցեղերի շարանին կարող ենք ավելացնել թուրք-թաթարական և քրդական քոչվոր ու կիսավայրենի այնպիսի ցեղախմբեր, ինչպիսիք են ջևանշիրցիները, սարըջալլուները, օթուզիքիները, քյաբիրլուները, իգիրմիդորթները և այլք, որոնց բնակեցումը Ղարաբաղի տարածքում իսկական չարիք դարձավ արցախահայության համար:*

*Այդպիսով, Արցախում բնակվող միատարր ու միաձույլ հայության մեջ մտավ օտարասեռ էթնիկ տարրը՝ իր հետ բերելով մտքի և մշակույթի ահավոր հետամնացություն*[39]*: Խաշնարած ցեղերի՝ Արցախ ներթափանցելուց հետո ընկած ողջ ժամանակաշրջանը հագեցած է եղել բնիկ հայերի և եկվոր էթնիկ տարրերի հակամարտությամբ: Բերված ցեղախմբերը, առաջին հերթին, Փանահ խանի համար հուսալի դաշնակիցներ էին Արցախի՝ իրեն չենթարկվող մելիքությունների դեմ պայքարի ժամանակ*[40]*: Իսկ առօրյա կյանքում այդ ցեղախմբերի հիմնական զբաղմունքներն էին անզեն ճամփորդների սպանություններն ու առևտրական քարավանների թալանը, ընդ որում՝ նրանց կողմից կատարվող այդ գործողությունները շարունակվել են նաև Ղարաբաղի խանության վերացումից տասնամյակներ անց:*

*Մելիք-Շահնազարը վախճանվել է 1792 թ.*[41]*, իրենից հետո որպես տխուր ժառանգություն թողնելով ղարաբաղյան հակամարտությունը: Ռաֆֆին նրան անվանել է ոչ այլ կերպ, քան «*Ղարաբաղի կործանիչ*»*[42]*, իսկ Լեոն՝ «*Խամսայի հայկական անկախության բուն և սկզբնական կործանիչ*»*[43]*: Բնավ էլ պատա-*

---

[38] *Ռ ա ֆ ֆ ի. նշվ. աշխ., էջ 502:*

[39] *Վ. Մ ն յ ա ն. Շուշի, Երևան, 1991, էջ 31:*

[40] *Ա. Մ ա ղ ա լ յ ա ն. Արցախի մելիքությունները և մելիքական տները XVII–XIX դդ., Երևան, 2007, էջ 182:*

[41] *Նկատենք, որ Պ. Չոբանյանը Մելիք-Շահնազարի մահվան թվական է համարում 1793-ը, ինչը չի համապատասխանում իրականությանը (հմմտ.* П. Ч о б а н я н, Указ. раб., с. 19*): Հարկ է նշել, որ նա հիմնովին սխալ է մեկնաբանում նաև Մելիք-Շահնազարի տապանաքարի արձանագրության՝ «*Արցախ գաւառաց իշխանին, *Վարանդու տիրապետողին» արտահայտությունը (նույն տեղում, էջ 18): Բանն այն է, որ այդ արտահայտությունը բանաձևային նշանակություն ունի և լայնորեն տարածված է եղել Արցախի մելիքների տապանագրերում, մինչև իսկ այն ժամանակ, երբ հայոց մելիքություններից այլևս ոչինչ չէր մնացել: Որպես ասվածի ապացույց բերենք հեռավոր Հնդկաստանի Չինսուրահ քաղաքում 1884 թ. վախճանված Գյուլիստանի մելիքական տոհմի անդամ Դավիթ Մելիք-Բեգլարյանի՝ տեղի Ս. Հովհաննես հայոց եկեղեցու բակում գտնվող տապանաքարի արձանագրությունը. «Ի քաղցր յիշատակ մեր սիրեցեալ հօր. Դաւթի որդւոյ Ֆրիդոն Մէլիք Բէգլարի,* որ էր վերջին իշխան Ղարաբաղի…» *(տե՛ս Տ. ս ր կ. Բ ա ղ ո ւ մ յ ա ն. Արևմտյան Բենգալիայում թաղված հայ հոգևորականները, Երևան–Կալկաթա, 2007, էջ 108, լուսանկ. էջ 119): Արցախի մելիքական տապանագրերում ունենք մինչև անգամ «աշխարհային տիրապետող», որի տիրապետած «աշխարհի» պարագիծը, սակայն, երբևէ չի անցել սեփական գավառի սահմաններից: Պետք է նկատել, որ Պ. Չոբանյանի գրվածքը լի է նմանատիպ սխալ մեկնաբանություններով և «մանր հայտնագործություններով», որոնց բոլորին անհնար է անդրադառնալ մեկ հոդվածի շրջանակներում:*

[42] *Ռ ա ֆ ֆ ի. նշվ. աշխ., էջ 452:*

[43] *Լ ե ո. նշվ. աշխ., էջ 375:*

*հական չէ, որ, ինչպես տեղեկանում ենք Ամարասի Իսրայել կաթողիկոսի՝ Մելիք-Շահնազարի վերջին օրերի մասին մի ուշագրավ վկայությունից, անգամ նրա չորս որդիները սկզբնապես հրաժարվել են մահվան մահճում պառկած իրենց հոր հետ վերջին տեսության ժամանակ առաջարկված հայրական ժառանգությունից: «Ի ՌՄԽԱ (1792) թվին Հայոց, որ Մելիք Շահնազարն մին ազար գտավ,– գրում է Իսրայել կաթողիկոսը,– Ջումշուտն մեծ որդին էր, նորանից վերն Հուսեինն էր, առաջ Ջումշուտին հրավիրեց, թե՝ որդի՛, ես ծերացել եմ, քիչ մի ազար էլ ունիմ, դու ինքդ էլ իմ մեծ որդին ես, ե՛կ իմ էլածն, թե՛ նաղդ, թե՛ վէջ, թե՛ հայվանաթ, թե՛ մյուլք քեզ հիպա անեմ, քանի որ խելքս գլխիս է. քանի որ ասեց՝ Ջումշուտն հանձն չառավ՝ թե լալա, ես քու ապրանքին թամահ չունեմ, ես էնչափ ունեմ, որ ինձ հերիք է: Սրանից ետն Հուսեինին կանչեց մոտն, էս թաքլիպս էսպես էլ Հուսեինին արավ, սա էլ հանձն չառաւ: Սրանից ետն Ջհանկիրին՝ թե որդի, ես քանի կենդանի եմ, եկ իմ ապրանքս քեզ հիպա անեմ. էս Ջհանկիրն էլ չի հանձն առավ: Նորանից ետն Ջհանպախշն կոչեց մոտն՝ ասաց, որդի՛, ես էս Խամսումս մին մարդ եմ, ինձ աշխարքս գիտեն, կարում չեմ, որ ես էս դովլաթս կառավարեմ, շատ է, և էլ մենակ եմ, եկ ես քեզ հիպա անեմ, էս տունս, էս դովլաթս դու յո՛լ տար, էս Ջհանպախշն հանձն չառավ. ետն Մելիք Շահնազարն շատ նեղացավ, մինչա Ջհանպախշին անիծեց»[44]: Բերված հատվածը հստակ ցույց է տալիս, որ Մելիք-Շահնազարը փոքրիշատե հարգանք և հեղինակություն չի ունեցել անգամ իր որդիների աչքում, էլ ուր մնաց թե դրականապես «տնօրիներ» բովանդակ արցախահայության ճակատագիրը:* Այս առումով մահամերձ Մելիք-Շահնազարի որդիների վարմունքը ոչ միայն նրա ազգադավ գործունեությանը տրված մի յուրահատուկ և դաժան գնահատական է, այլև Մելիք-Շահնազարի նորագույն □փաստաբաններիի□ ամուլ ջանքերի վրա քաշված սև խաչ:

*Մելիք-Շահնազարն ամուսնացել էր երեք անգամ: Այդ մասին տեղեկանում ենք Արցախի մելիքների կանանց և որդիների մասին Բաղդասար մետրոպոլիտի 1849 թ. մի գրությունից, որտեղ նրա ընտանիքի մասին ասվում է հետևյալը. «Վարանդու Մելիք Շահնազարն ունէր ինքեան զառաջին օրինաւոր կին* Թաջում *անուն, յորմէ և ծնեալ է օրինաւոր որդի նորա Մելիք-Ջիւմշիւդն: Զկնի մահուան յիշեալ Թաջումին, Մելիք-Շահնազարն էառ առ ինքն ի կենդանի առնէ զկինն* Սօնայ *և ընդդէմ օրինաց պսակեցաւ ընդ նմա, յորմէ և ծնեալ է որդի նորա Մելիք-Հիւսէինն, որոյ և ժառանգքն գտանին այժմ յԱւետարանոց գեղջ: Ի կենդանութեան նոյն Սօնայ ապօրինաւոր կնոջն Մելիք-Շահնազարն կրիւք բղջախոհութեան (ցանկասիրությամբ –* Ա. Մ.*) ամուսնացաւ ընդ օրիորդին* Մալակայ*, դստեր հարազատ եղբօր հանգուցեալ կնոջն իւրոյ Թաջումի, և յայսմ ապօրէն ամուսնութենէ ծնեալ են Ջահանբախշն և Ջահանկիրն, որոց ժառանգք ևս գտանին յԱւետարանոց»[45]: Ակնհայտ է, որ Մելիք-Շահնազարի ե-*

---

[44] *Նույն տեղում, էջ 376:*

[45] *ՄՄ, Կաթողիկոսական դիվան, թղթ. 150, վավ. 839, թ. 3–4, բնագիր, Վավերագրեր Հայ եկեղեցու պատմության, գիրք Թ, Հայ Առաքելական եկեղեցու Արցախի թեմը (1813–1933 թթ.), կազմեց՝ Ս. Բեհբուդյանը, Երևան, 2001, էջ 180, ՄՄ, ձեռ. 7429, էջ 8բ, որտեղ կարդում ենք. «Մելիք Շահնազարն ունեցաւ 3 կին. առաջին բսակաւծ կնկանից ծնաւ*

*րեք ամուսնություններից ծնված որդիները չէին կարող հաշտ ու համերաշխ լինել: Ավելին, նրա երկրորդ և երրորդ ամուսնություններից կամ ինչպես ժողովրդի գիտակցության մեջ է արմատացած՝ ապօրինի կապերից ծնված լինելու հանգամանքը ամենևին էլ չի խանգարել, որ Մելիք-Շահնազարի այդ զավակները ևս ունենան Վարանդայի մելիք դառնալու հավակնություններ:*

*Հանգուցյալ մելիքին «օրենքով պետք է հաջորդեր Ջումշուդը, որովհետև նա ծնված էր Մելիք-Շահնազարի օրինավոր ամուսնությունից: Բայց Իբրահիմ խանը իր կնոջ՝ Հուրիզադ-խանումի ազդեցությամբ, ընտրեց նրա հարազատ եղբորը՝ Հուսեինին: Խանի կամայականությունը առիթ տվեց ժառանգների մեջ երկպառակության: Ջհանբախշը դիմեց պարսից շահին, նրանից ֆիրման ստացավ, աշխատում էր ինքը իշխել: Բայց Մելիք-Հուսեինը, Իբրահիմ խանի օգնությամբ, հարձակվեցավ Ջհանբախշի տան վրա, նրա կայքը կողոպտեց և Ջհանբախշը հազիվ կարողացավ իր կյանքը ազատել, իր եղբայր Ջհանգիրի հետ փախչելով Շամախի՝ Մուստաֆա խանի մոտ»*[46]*: Հասարակական հակակրանքն այնքան մեծ էր տխրահռչակ մելիքի նկատմամբ, որ որդիները չկատարեցին անգամ իրենց հոր վերջին կամքը՝ ավարտին հասցնելու Ամարասի վերանորոգման աշխատանքները, որով Մելիք-Շահնազարը հույս ուներ երկնային կյանքում թողություն ստանալ իր բազմաթիվ երկրային մեղքերի համար:*

*Քայքայված Արցախի մելիքություններ և երկպառակություններից բզկտված ընտանիք. ահա՛ Մելիք-Շահնազարի «դիվանագիտության» իրական և առավել տեսանելի հետևանքները: Նշված և չնշված բազմաթիվ փաստերի լույսի ներքո պարզապես անլուրջ են թվում որոշ հեղինակների՝ հետին թվով Շահնազարին «դիվանագիտական» ինչ-ինչ հորինովի ծրագրեր վերագրելու ճիգերը: Ո՛չ քաղաքագիտական «խորհրդատվությունները», և ո՛չ էլ չտեսնված-չլսված «նորույթներից» ափնիբերան մնացած ունկնդիրների զարմանքը չեն կարող փրկել «հերոսին», երբ այդ «հերոսը» իրականում դավաճան է:*

*Մելիք-Շահնազարի հայրենադավ գործունեությունը չափազանց ծանր ազդեցություն ունեցավ Արցախի հայկական իշխանությունների վրա: Նրա գործունեությունը գնահատելիս միշտ պետք է նկատի ունենալ այդ հանգամանքը: Այս խորապատկերում, կարծում ենք, սխալված չենք լինի, եթե պնդենք, որ* Մելիք-Շահնազարի բացասական կերպարի հեղինակը ոչ թե Ռաֆֆին է կամ մեկ այլ ուսումնասիրող, այլ հենց ինքը՝ Մելիք-Շահնազարը, իր ազգադավ գործերով*:*

*Ամփոփելով՝ նշենք, որ այնքան ժամանակ, քանի դեռ մելիքություններից մեկի տիրակալի սրտում բուն չէր դրել դավաճանության ախտը, նրանք, ըստ էության, ազատ և ինքնիշխան էին, իսկ երբ Մելիք-Շահնազար Բ-ի թողտվությամբ Արցախում հաստատվեց վաչկատուն սարըջալլուների ցեղապետ Փանահ խանը, վերջինիս և նրա որդուն՝ Իբրահիմ խանին հաջողվեց զգալիորեն թուլացնել Արցախի մելիքությունները: Եվ միայն Արցախյան հերոսական ա-*

---

*Մելիք Ջիմշուդն. երկրորդ խանմից՝ Հուսէյինն, երրորդ բսակօվէց՝ ծնաւ Մելիք Ջհանբախշն, Ջհանգիր աղան»:*

[46] *Ռ ա ֆ ֆ ի. նշվ. աշխ., էջ 499:*

*զատամարտի շնորհիվ հաջողվեց սրբագրել Մելիք-Շահնազարի թույլ տված շուրջ 240-ամյա ճակատագրական սխալը:*

*Այդ առումով Արցախի մելիքությունների պատմությունը նաև միաբան լինելու մի յուրօրինակ դաս է գալիք սերունդներին: Այդ դասը հաշվի չառնելու դեպքում մեր Հայրենիքի այլևայլ անկյուններում ևս կարող են հայտնվել նորօրյա փանահներ և իբրահիմներ:*

## О НЕКОТОРЫХ ВОПРОСАХ ИСТОРИИ МЕЛИКСТВ АРЦАХА

АРТАК МАГАЛЯН

Резюме

В 1752 г., с дозволения печально известного мелика Варанды Шахназара II, в Арцахе обосновался главарь племени сарыджаллы из джеванширских кочевников – Панах-хан. После его появления в Арцахе армянские меликства Хамсы были вынуждены противостоять новым вызовам. Именно с появлением Панаха началось проникновение инородных и иноверных элементов в Арцах. Предательская деятельность мелика Шахназара имела самые тяжелые последствия для армянских меликств Арцаха; при оценке его деятельности важно учитывать данное обстоятельство. И только благодаря Арцахской освободительной войне удалось исправить 240-летнюю фатальную ошибку, допущенную меликом Шахназаром.

## ON SEVERAL ASPECTS PERTAINING TO THE HISTORY OF THE MELIKDOMS OF ARTSAKH

ARTAK MAGHALYAN

Summary

In 1752, following the permission of Varanda's notorious ruler Melik Shahnazar II, chieftain of the Sarijallu branch of the nomadic Jevanshir tribe, Panah khan, settled in Artsakh (Karabakh). After his appearance in Artsakh, the local Armenian meliks of Khamsa confronted new challenges. It was precisely after Panah, that ethnic and religious foreign elements started penetrating into Artsakh. As a result, the treacherous actions of Melik Shahnazar II had very harsh consequences on the Armenian principalities of Artsakh. This fact must be always borne in mind while assessing Melik Shahnazar's legacy. Only thanks to the heroic Artsakh liberation war the 240-years old mistake of Melik Shahnazar was rectified.